ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՇԱԲԱԹ*

ՀՏԴ 02(479.25)

Ազգային գրադարանային շաբաթը համարվում է Հայկական գրադարանային ասոցիացիայի ամենակարևոր նախաձեռնություններից մեկը: Նպատակը՝ գրքի, գիտելիքի և ընթերցանության դերի վերաիմաստավորումն է, գրագետ և տեղեկացված հասարակության ձևավորումն ի շահ մտավոր արժեքների պահպանման:

Ազգային գրադարանային շաբաթվա տոնակատարությունները սկիզբ են առել Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1958 թ.[1]: Այնտեղ միջոցառումները սկսվում են կիրակի և ավարտվում շաբաթ օրը: Ավելին, միջոցառումների շարքում նշվում է նաև Գրադարանավարի օրը:

Հայաստանում Ազգային գրադարանային շաբաթվա միջոցառումներն առաջին անգամ իրականացվել են 2002 թ. և մինչ օրս իրենց ուրույն տեղն ունեն գրադարանային միջոցառումների շարքում: Ի տարբերություն ԱՄՆ-ի՝ Հայաստանում միջոցառումները մեկնարկում են երկուշաբթի և շարունակվում են ողջ շաբաթվա ընթացքում:

---

* *Ներկայացվել է 17.04.2023, ընդունվել է տպագրության 26.06.2023:*
The article was submitted on 17.04.2023, accepted for publication on 26.06.2023.

[1] National Library Week History https://www.ala.org/conferencesevents/national-library-week-history (06.06.2023):

Ազգային գրադարանային շաբաթը հրաշալի առիթ է մեծարելու գրադարանային ոլորտի ներկայացուցիչներին, արժևորելու գրադարանները՝ որպես մշակութային, գիտական և սոցիալական հարթակներ:

Միջոցառումների շրջանակում կարևորվում են գրադարանային ոլորտին առնչվող հիմնահարցերը և դրանց լուծմանը նպատակաուղղված գործիքակազմը: Շաբաթվա աշխատանքներին մասնակցում են հայաստանյան գրեթե բոլոր գրադարանները՝ իրենց բազմաբնույթ միջոցառումներով: Գրադարանները հատուկ կազմված ծրագրով անցկացնում են տարբեր հոբելյանական և թեմատիկ միջոցառումներ իրենց տարածաշրջանում, ինչպես նաև մասնակցում են այլ գրադարանների միջոցառումներին:

Ազգային գրադարանային շաբաթն անուրանալի դեր ունի մշակութային կյանքի համաչափ ձևավորման համատեքստում, քանի որ գիրք ընթերցելն ու սիրելը, գրքի նկատմամբ հոգատարություն դրսևորելն առաջնային են հոգևոր ու մշակութային դաստիարակության գործում, իսկ միջոցառումները նպաստում են գրադարանների, գրքի և ընթերցանության նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը, հանրության կյանքում գրադարանների նշանակության արժևորմանը, ընթերցող-գրադարան կապի սերտացմանը:

Ամեն տարի ապրիլ ամսին անցկացվող այս միջոցառումն արդեն ավանդույթի ուժ է ձեռք բերել և նվաճել հասարակության համակրանքը:

2023 թ. Ազգային գրադարանային շաբաթն անցկացվեց ապրիլի 17-23-ը, «Գրադարանը կրթության բաց հարթակ» կարգախոսով: Շաբաթվա շրջանակներում անցկացվեցին տարբեր մշակութային միջոցառումներ՝ առկա և առցանց եղանակով: Մշակութային-մասնագիտական շաբաթը հնարավորություն ընձեռեց կազմակերպելու փոխայցելություններ մարզային ու քաղաքային գրադարանների միջև, գրադարանների փորձն ու նորարար լուծումները միմյանց

հետ կիսելու, գրադարանային արդի խնդիրների շուրջ քննարկումներ կազմակերպելու համար: Անցկացված վարպետաց դասերը, կլոր սեղան-հանդիպումները հրատարակիչների և համայնքապետերի հետ, ինչպես նաև մասնագիտական այցերը այլ գրադարաններ մեկ անգամ ևս կարևորեցին Ազգային գրադարանային շաբաթվա դերը հայկական թվային բովանդակության ստեղծման, գրադարանային տեղեկությունները շահագրգիռ լսարանին մատուցելու տեսանկյունից: Հանրապետության տասնյակ՝ երևանյան, մարզային, համայնքային, մասնագիտական ու բուհական գրադարաններ մեկ շաբաթ շարունակ դարձան յուրօրինակ հարթակ երեխաների և մեծահասակների շարունակական կրթության համար:

Հայկական գրադարանային ասոցիացիա